Երաշխավորում եմ:
ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ՝ Լ. Սարգսյան

Հաստատում եմ:
Դպրոցի տնօրեն՝ Օ. Սաղաթելյան

ՀՀ ԿԳՆ ԵՐԵՎԱՆԻ «Գ.ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.190 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

11 L1, 11 L2, 11 L3 դասարանների
Դասղեկ՝ Ժ. Հայրապետյան

2022-2023

Դասղեկի թեմատիկ պլանավորում

Դպրոց_____Գ. Գյուլբենկյանի անվան 190 ավագ դպրոց

Դասարան_____11-րդ լեզվաբանական

Դասղեկ_____Ժ. Հայրապետյան

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ «Դասղեկի ժամ » դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, «Մտքի հրավառություն» գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարքուբարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի՝ իմ օրվա պլանում:

Դասի համարը	Դասի թեման
1.	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2.	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:
3.	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
4.	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:
5.	Կյանքը իմ պատուհանից: Որն է աշխարհը փոխելու իմ ծրագիրը:
6.	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
7.	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:
8.	Ճակատագի՞ր, թե՞ սեփական բախտի տնօրինում:
9.	Մասնագիտական կողմնորոշում: Իմ երազանքների մասնագիտությունը: Ի՞նչ մասնագիտություն եմ ընտրելու ես:
10.	Հոգու կրթություն և մտքի թռիչք: Ստեղծարարություն:

11.	Ես հաշվում եմ աշնան գույները: Սեր, ատելություն,
12.	Աշնանային էքսկուրսիա քաղաքում: Դիտել ծրագրային ներկայացում Հ.Պարոնյանի կամ Սունդուկյանի անվան թատրոններում:
13.	Էքսկուրսիայից ստացած տպավորության քննարկում, ներկայացման վերլուծություն:Արվեստի դերը մեր կյանքում:
14.	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:
15.	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում: Ձեռքբերումներ, բացթողումներ:
16.	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
17.	Ես հայրենիքի մի մասնիկն եմ: Իմ տեղն ու դերը իմ հայրենիքում և պետության կայացման գործում:
18.	Հայոց բանակ
19.	Մարմնակրթություն, առողջապահություն:
20.	Հիգիենիկ հարցեր:
21.	Հոգևոր դաստիարակություն, հոգու ու մարմնի ներդաշնակություն:
22.	Մարդկային արատներ:
23.	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
24.	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
25.	Սերը որպես տիեզերական զգացմունք:
26.	Հանճարները սիրո մասին:
27.	Աշխատանք, կամավորություն, տարբեր մասնագիտությունների աշխատանքային առօրյայի քննարկումներ, լավ և վատ կողմեր:
28.	Խրատանի, առակներ, առածանի, ժողովրդական բառուբան, խոսքի արժեքը, մեկնաբանություններ:
29.	Ինքնատիրապետման մի քանի հարցեր: Բռնկուն տարիք:
30.	Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
31.	Գարուն, նոր կյանք, զարթոնք:
32.	Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ):
33.	Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը:
34.	Ամփոփիչ դաս:

Նախատեսում եմ նաև «Բաց դասեր»՝ նվիրված Եղ. Չարենցի 125-ամյակին և այցելություն Եղ. Չարենցի տուն-թանգարան: Նաև քննարկումներ ու դասեր, որոնց թեմաների ընտրությունը կկատարեն սովորողները՝ ընտրելով իրենց ավելի հոգեհարազատ թեմաները: